

ՀՐԱՎԵՐ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

«Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր

Խորհրդատվական ծառայություններ, Մոնիտորինգի և գնահատման (ՄևԳ) մասնագետ IRFSP/TA/CQS-2020/010

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամից /այսուհետ՝ ԳԶՄՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱՄ / իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

ԵԳՖԱ ծրագրի նպատակն է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակն ընտրված գյուղական տարածքներում, որտեղ աղքատությունը տարածված է, ստեղծելով եկամուտների աճի և զբաղվածության ապահովման կայուն հնարավորություններ՝ գյուղատնտեսական արտադրության համակարգերի և ապրանքային մշակաբույսերի արտադրության արժեզրոյի օղակների միջև առաջընթաց ու հետընթաց կապերի հզորացման ճանապարհով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը ԵԳՖԱՄ-ի շրջանակներում ՄևԳ մասնագետի համար փնտրում է բարձր որակավորում ունեցող և մոտիվացված խորհրդատուի:

**Խորհրդատուի հիմնական պարտականություններն են՝**

Մոնիտորինգի և գնահատման (ՄևԳ) մասնագետը կաշխատի ԾԻԳ-ի տնօրենի անմիջական վերահսկողության ներքո և պատասխանատու կլինի հետևյալ խնդիրները հաջողությամբ իրականացնելու համար.

- Պլանավորել և համակարգել ՄևԳ աշխատանքները՝ հիմնվելով Տրամաբանական հենքից (ԱԱՀԿ, RIMS) բխող ցուցանիշների և առաջընթացի մոնիտորինգի ու հաշվետվությունների ներկայացման թափանցիկ համակարգի վրա,
- Իրականացնել ծրագրերի տարեկան և վերջնական թիրախների ու արդյունքների մոնիտորինգ, կատարել ազդեցության գնահատում՝ համաձայն Առանցքային արդյունքների ցուցանիշների չափման ԳԶՄՀ նոր ուղեցույցի (2020 թ.), և կազմել հաշվետվություններ,
- Վերահսկել ծրագրի մոնիտորինգի և գնահատման իրականացումը՝ համաձայն ծրագրի ուղեցույցների և ընթացակարգերի, ֆինանսական համաձայնագրի և Ծրագրի ղեկավար խորհրդի որոշումների,
- Ապահովել տարեկան ՄևԳ աշխատանքային պլանի կազմումը, այդ թվում՝ մոնիտորինգի դաշտային այցելությունների ժամանակացույցը՝ ըստ ծրագրի բաղադրիչների,
- Պարբերաբար իրականացնել մոնիտորինգի դաշտային այցելություններ, այդ թվում՝ ՄևԳ ցուցանիշների հավաքագրում և տվյալների մուտքագրում ՄևԳ մատրից,
- Հետևողական լինել մոնիտորինգի և գնահատման արդյունքների, այդ թվում՝ դաշտային այցելությունների ընթացքում բարձրացված ցանկացած հարցի վերաբերյալ և ԾԻԳ-ի Զարգացման կոմիտեի ուշադրությունը հրավիրել դրա վրա՝ ըստ անհրաժեշտության ապահովելու շտկումների ձեռնարկումը և/կամ ճշգրտումների իրականացումը:
- Մերտորեն համագործակցելով Ծրագրի գենդերային հարցերի և սոցիալական ներառման մասնագետի հետ՝ աջակցել Ծրագրին ըստ սեռի և հնարավորության դեպքում ըստ երիտասարդության տարանջատված տվյալներ ունենալու, ինչպես նաև տնային տնտեսությունների և ծրագրի ուղղակի շահառուների մասով ծրագրի ազդեցության վերաբերյալ ճշգրիտ տվյալներ ապահովելու գործում,
- Ապահովել համապատասխան տվյալների հավաքագրումը՝ հաշվետվությունների ստեղծման նպատակով Ծրագրի ֆինանսական և ֆիզիկական քանակական արդյունքների տվյալների շտեմարանը (ՄևԳ մատրից) տեղեկատվության կառավարման համապատասխան համակարգում ժամանակին համախմբելու համար: Սա ներառում է ԾԻԳ-ի Պլանների պարբերական թարմացում:
- Հատուկ թեմատիկ/դեպքերի ուսումնասիրությունների և համաձայն ԱԱՑ չափման ԳԶՄՀ ուղեցույցի՝ ազդեցության գնահատման վերջնական ուսումնասիրության համար համապատասխան Առաջադրանքի պայմանների (ԱՊ) մշակում՝ պահպանելով ՄևԳ աշխատանքների շրջանակներում ընտրված ծառայություն մատուցողների կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ որակի ուժեղ հսկողությունը և տվյալներ ստանալով Ծրագրի անձնակազմից, այդ թվում՝ գենդերային հարցերի և սոցիալական ներառման մասնագետից,

- Համագործակցելով Համակարգման և շահագրգիռ այլ բաժինների հետ՝ ապահովել Ծրագրի տարեկան ամփոփիչ աշխատաժողովների անցկացում և կազմակերպել Ծրագրի տարեկան վերանայման աշխատաժողով ուշադրություն դարձնելով մասնավորապես տարեկան կատարողականի հաշվետվությունների, քաղած դասերի և առաջարկությունների վրա,
- Զարգացման կոմիտեին ներկայացնել հատուկ ուսումնասիրությունների անհրաժեշտության պահանջները,
- Մահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել ՄևԳ հաշվետվություններ, որոնք պետք է ներառվեն ԾԻԳ-ի՝ առաջընթացի համախմբված հաշվետվություններում և ՏՄՊԲ-ում,
- Անհրաժեշտության դեպքում համակարգել իրականացնող մյուս գործընկեր կառույցներից (ֆինանսական հաստատություններ) ստացված պարբերական մոնիտորինգի/տարեկան հաշվետվությունների ստացումը և ուսումնասիրումը: Ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի համար կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունքների մակարդակով ցուցանիշների (ԱԱՀԿ) վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել Զարգացման կոմիտեին,
- Հայտնաբերել և ձեռնարկել ընթացիկ և փոփոխվող ընթացակարգերի վերաբերյալ կորպորատիվ վերապատրաստում/թարմացումներ,
- Ներդնել համապատասխան ինստիտուցիոնալ պայմաններ ՄևԳ-ի համար, որոնք նաև կսատարեն գիտելիքների կառավարմանը (ԳԿ) և իրազեկմանն ուղղված ջանքերին՝ տրամադրելով ՄևԳ համակարգի միջոցով հավաքագրված փաստեր ազդեցության վերաբերյալ:
- Մշակել 2021 թ. Գիտելիքների կառավարման և հաղորդակցման համառոտ պլան, որը կընդգրկի հետևյալ հիմնական ասպեկտները՝ գիտելիքների և տեղեկատվական հոսքերի արագ ուսումնասիրություն, լավագույն գործելակերպի և հաջողության պատմությունների համակարգված փաստաթղթավորում (ներառյալ՝ տպագիր, լուսանկարահանման, համացանցային, ձայնագրման և տեսանյութերի միջոցով) և տարածման մի շարք մեթոդներ՝ կախված թիրախային լսարանից, ծրագրի կարիքներից և բացթողումներից՝ սկսած մարզայինից մինչև հանրապետական մարմիններ, այդ թվում՝ դեմ առ դեմ կամ վիրտուալ հանդիպումներ, սեմինարներ և փոխադարձ այցելություններ՝ շահագրգիռ կողմերի և գործընկերների շրջանում գիտելիքների փոխանակմանն աջակցելու համար:

**Ընտրության չափանիշները և միավորները հետևյալն են՝**

Չափանիշ	Միավոր
Մագիստրոսի կոչում սոցիոլոգիայի, տնտեսագիտության, կառավարման կամ հաստիքին առնչվող այլ ոլորտում (վիճակագրություն)	10
Առնվազն երեք տարվա փորձ մոնիտորինգի և գնահատման ոլորտում	20
Կառավարման առնվազն մեկ տարվա փորձ	5
Նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձ միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում	5
Հիմնավոր պատկերացում գյուղական զարգացման ոլորտի, մասնավորապես մասնակցային գործընթացների, համատեղ կառավարման և գենդերային հարցերի վերաբերյալ	20
Փաստաթղթերի կազմման և շարադրման, այդ թվում՝ վերլուծությունների կամ հետազոտությունների ներկայացման գերազանց ունակություններ	5
Հաղորդակցման գերազանց հմտություններ և կազմակերպության նպատակներին հասնելու համար գործընկերների հետ համատեղ աշխատելու ունակություն	5
Տվյալների հավաքագրման, վերլուծության և պահպանման ապացուցելի փորձ	10
Դաշտային աշխատանքի ապացուցելի փորձ և տարբեր շահագրգիռ կողմերի հետ աշխատելու ունակություն	10

Հայերենի և անգլերենի գերազանց իմացություն (անգլերենի իմացությունը պարտադիր է)	5
Microsoft Office-ի (Word, Excel, Power Point, և այլ ՄևԳ հետ առնչվող ծրագրերի) գերազանց իմացություն, համացանցից օգտվելու կարողություն	5

Ծրագիրը իրականացնելու նպատակով ԾԻԳ-ը հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը, որպեսզի մասնակցեն առաջիկա մրցույթին վերոնշված ծառայությունների մատուցման համար:

Ծառայությունների տևողություն՝ 12 ամիս, երկարացման հնարավորությամբ՝ կախված աշխատանքի արդյունքներից և բյուջեի առկայությունից:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն՝

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով;
- Ինքնակենսագրական սեղմագրեր (CVs) անգլերեն և հայերեն լեզուներով, որոնք ներառում են տեղեկատվություն Ծառայությունների իրականացման համար պահանջվող որակավորման և համապատասխան փորձի վերաբերյալ:

Ընտրության եղանակն է՝ **Ընտրություն Խորհրդատուի Որակավորման հիման վրա (CQS)**

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010թ. /<https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b/> սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով և ձեռնարկով սահմանված ընթացակարգերի համաձայն: Առաջադրանքի պայմանները հրապարակված են <https://raed.am/procurement/adstatements.html> կայքում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք գրել [procurement@raed.am](mailto:procurement@raed.am) հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2020թ. Դեկտեմբերի 02-ը, ժ.18.00:

**ՀՀ ԷՆ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի  
իրականացման գրասենյակ” ՊՀ  
Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4,6 հարկ:  
Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 54 – 65 – 10; e-mail: [procurement@raed.am](mailto:procurement@raed.am)**